«Պտղատու ծառերի բուծարան եւ այգիք» Եղբ. Գ. և Մ. Փրիդոնեանց-ների:

—

Չնայած նրան, որ Անդրկովկասը թէ իր կլիմայով և թէ հողով շատ նպաստաւոր է այգեգործութեամբ պարապելու համար, այս վերջինս մեզ մօտ շատ դանդաղ է աճում: Խանգարող պատճառների մէջ վերջի տեղը չի բռնում և այն հանգամանքը, որ մեր այգետէրերը ծանօթ չեն և չեն կարողանում ջոկել պտղատու ծառերի լաւ և շահաւէտ տեսակները, այլ աճեցնում են այն տեսակները, որոնք դեռ պապերի ժամանակից ընդունուած են այս կամ այն տեղում: Մինչդեռ արտասահմանեան այգեգործութիւնը առաջ է բերել ահագին քանակութեամբ պտուղների նոր տեսակները, որոնք թէ իրանց պտղատուութեամբ, թէ դիմացկանութեամբ և թէ համով, հոտով գերազանցում են տեղականները:

Մեր առաջ դրուած Եղբ. Փրիդոնեանցների հրատարակած ցուցակը՝ ծանօթացնում և առաջարկում է մեր այգետէրերի ուշադրութեան թէ արտասահմանեան և թէ Անդրկովկասեան ընտիր տեսակների հետ: Եղբ. Փրիդոնեանցների պտղատու ծառերի բուծարանը այդ տեսակ հիմնարկութիւնների շարքում բռնած է առաջնակարգ և պատուաւոր տեղերից մէկը:

Եղբ. Փրիդոնեանցները, ունենալով բուծարանին կից սեփական այգիներ, նախ քան մի որևէ տեսակը գնողներին առաջարկելու, փորձում են նրա յատկութիւնները իրանք: Նրանց բուծարանի երկրորդ ոչ պակաս գին ունեցող առաւելութիւնն է տեսակների անուանացուցակի ճշտութիւնը:

Թէ իր արտաքինով և թէ բովանդակութեամբ Եղբ. Փրիդոնեանցների հրատարակած ցուցակը շատ տարբերւում է առհասարակ հայերէն լոյս տեսնող այդ կարգի գործերից և աւելի շուտ յիշեցնում է արտասահմանեան և ռուսաց լաւ ֆիրմաների հրատարակած ցուցակները:

Գիրքը ունի հետևեալ մասերը.

ա) Տունկեր ուղարկելու պայմանները:

բ) Միքանի խօսք պտղատու այգիներ գցելու և ծառեր տնկելու մասին:

գ) Ցուցակ պտղատու ծառերի և թփիկների:

դ) Բոյսերի հիւանդութիւնը և նրանց բժշկութիւնը:

ե) Բոյսեր բժշկելու գործիքներ և մթերքներ:

Իսկ գրքի վերջում բերուած է գինեգործութեան մէջ գործածուող մեքենաների և գործիքների ցուցակը:

Եթէ աչքի առաջ առնենք այն հանգամանքը, որ հայ գիւղատնտեսական գրականութեան մէջ համարեա չկայ ոչ մի ձեռնարկ, որը ծանօթացնէր այգեգործութեան մէջ պահանջուող նոյնիսկ տարրական ճշմարտութիւնների և հասկացողութիւնների հետ, կը հասկանանք, թէ ինչ մեծ ծառայութիւն են արել հայ այգետէրերին Եղբ. Փրիդոնեանցները, կցելով իրանց գրքոյկին բ և ե մասերը։

Գիրքը զարդարուած է մեծ թուով յաջող և գեղեցիկ կատարուած նկարներով։ Ցանկալի է, որ այս գիրքը մեծ քանակութեամբ տարածուէր մեր այգետէրերի մէջ, մանաւանդ որ դրա համար առանձին ծախք չէ հարկաւոր, պէտք է միայն դիմել Եղբ. Փրիդոնեանցներին (Ст. Скр. и Зак. ж. д. плодовые сады и питомники Бр. Г. и М. Придоновыхъ) որոնք ցուցակը ցանկացողներին ուղարկում են ձրի։

ԵՐ. ՍԱՐ.

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Ռ. Խանազատի՝ «Իդէալիզմ թէ Մատերիալիզմ» ուսումնասիրութիւն. (արտ. «Տարազ»-ից) Թաւրիզ, 1904. գ. 10 կ։
2) «Լուսնեակ գիշերին» էսկիզ, Իա Էկալաձէի (Ռոմանթ Կոբա) թարգմ. վրաց. Ղ. Կ. Թիֆլիս, 1904, գ. 5 կ։
3) Շերամի՝ «Սիրոյ Զոհեր» պօէմա, Բագու, 1904, գ. 3 կ։
4) Խաժակի՝ «Հարկերը Տաճկաստանում» ուսումնասիրութեան մի փորձ, Բագու, 1904. գ. 40 կ։
5) Ա. Ահարոնեանի՝ «Լուութիւնը» վէպ. Թիֆլիս, 1904, գ. 60 կ։
6) Ցուսիկ եպիսկոպոսի՝ ա) «Հայրապետ. աթոռի մասին համառօտ տեսութիւն» բ) «Թուղթ Սիմէօնի Սսոյ կաթողիկոսի առ Փիլիպ. Էջմիածնի կաթողիկոս»—(արտ. «Արարատ» ամսագրից) Վաղարշապատ, 1904. գ. 30 կ.։
7 Հաշիւ Հայոց Դրամատիկական Ընկ. 190³/₄. տարեշրջանի գործունէութեան Թիֆլիս, 1904։
8) Տարեւոր Տեղեկագիր Հանրական Ատենին Ցանձանձանաց հայազգ. հաստատութեանց Բատաւիոյ վասն 1903 ամի. Նոր-Զուղա 1904։
9) Ե. Թոփչեանի՝ «Լոյս» գրպանի պատկերազարդ օրացոյց 1905 թ. գ. 20 կ.։